22 ՓԵՏՐՎԱՐ · 1847 ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ · ԹԻՒ 35 ١٩ ՊԷՊԻԼ ԷՎԼԷԼ · ١٢٦٣

ՀԱՅԱՍՏԱՆ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Տարեկան գին կանխիկ Ղրշ 100
Վեցամսեայ „ „ „ 52 1/2
Պօլսէն դուրս դացած Լրագիրներուն փոստային ծախքը առնողին վրայ է։
Այս Լրագիրը ամէն շաբաթ օրերը կը հրատարակուի։

Իր շահին համար լուր մը հրատարակել ուզողը պիտի վճարէ տողին 40 փարայ։
Նորատիպ գրոց ծանուցումը ձրի է։
Դուրսէն եկած նամակներուն փոստային ծախքը խրկողը պիտի վճարէ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊՕԼԻՍ 22 ՓԵՏՐՎԱՐ

—Ընցածները լրագրոյս միջոցաւը ծանուցած էինք որ՝ Պէյօղլու զինուորական ազգուսի դպրոցին մօտերը մէկ մեծ քարաշէն բժշկական ազգուսի դըպրատուն մը շինելու համար կայսերական հրաման եղաւ։ Հիմայ՝ այն տեղը որ որոշուեցաւ և պէտք եղած նախապատրաստութիւնները կատարուեցաւ, անցած չորեքշաբթի օրը (փետրվար 12), հիմը ձըգելուն հանդէսը եղաւ, վեհափառ Ինքնակալը անձամբ, և տէրութեան մեծամեծ նախարարները, և յատկապէս ազգուսի բժշկապետ արժանապատիւ Իսմայիլ էֆէնտին, և ղալֆա սէրայէի բժշկական դըպրատան աշակերտները ամէնքն ալ հոն գտնուելով։ Սուլթան Ահմէտի մզկիթին Վէրէ (քարոզիչ) շէյխ Սնուբատ էֆէնտին՝ այն օրուան հանդէսին համեմատ աղօթքով մը բարեսէր Ինքնակալին կենացը երկարութիւն, և նորին ձեռքը ասանկ աղէկ և հասարակաց օգտակար շինուածքներուն շատնալը բարեմաղթելէն ետքը՝ յիշեալ դպրատան հիմը ձգվեցաւ։

Հանդէսը լըմընալէն ետքը՝ արժանապատիւ բժշկապետը բժշկական դպրատան աշակերտները պեղցիկ կարգաւ մը մէկ տեղ բերելով՝ պերճախօս հանդիսականաց ներկայութեանը հետեւեալ ճառը խօսեցաւ։

«Ինչպէս։

«Ընտուծց հարիւր հազար անգամ գոհութիւն տալու ենք, որ մեր բարեգութ Ինքնակալին նման թագաւորի մը ծառայելու շնորհին մեզ արժանի ըրեր է, որուն ամէն մէկ կայսերական կամքը՝ իւր ամէն հպատակացը մէկ մէկ շնորհ և գթութիւն են. որով թէ իւր նախորդներէն և թէ յաջորդներէն գեղագոյն կը հանդիսանայ։ Այս օրուան օրս՝ մեր պատմութեան մէջ երեւելի և փառաւոր տեղ մը պիտի բռնէ։ Եւ դուք մի կարծէք որ այսօր միայն մէկ դպրատան մը հիմը կը ձըգվի, այլ մարդասիրութիւն հիմն եղած գիտութեան և իմաստութեան հիմը կը ձըգվի։ Մի՛ կարծէք որ մեծազօր Ինքնակալիս, որուն առ հասարակ իւր ծառայքը վրայ ունեցած խնամքը և սիրոյն յիշատակն է, միայն ձեր գիտութիւնը սորվելու դիւրութիւն և կատարելութիւն ըլլալու համար տեղ շնորհելով միայն ձեզի համար հանգստութիւն կը ճարէ, այլ իւր բոլոր թագաւորական մտածութիւնները բուն իսկ ազգերնուս երջանկութեանը վրայօք ըլլալը առ հասարակ ամէնուն ծանուցանելու համար մէկ մեծ նշան մը կը թողու։ Ընոր որ մէկ շնորհը և երախտիքները համ բերնք, և այսքան շնորհքներուն համար շնորհակալ ըլլալու ինչպէս կարող ըլլանք, որ մեզ ազգութեան բարձրացնելուն շնորհը՝ իրեն առատագութ յօժարութեանը հետ չափելով բաւական չի սեպեց. և ասոր վրայ յաւելուած ընելու համար ինչ շնորհներ և ինչ խնամքներ չըրաւ մեզի։ Զի թէ միայն գրագիտութիւն ծաղկեցուց, այլ և ծաղկեցընելու համար ալ ուրքան բարիքներ ըրաւ։ Բուտյգն այս է՝ որ անոր շնորհացը ծովուն մէջ ընկղմած պէս եմք, չէ թէ միայն մեք, այլ և ծովու նման առատութիւնը բոլոր աշխարհք քաղելով, ամէն մարդոց առաջը ամէն բանէն յարգի եղած առողջութեան և երջանկութիւն պահպանութեանը գործոյն մեզ բաւական ընելու համար մեր վրայ եղած թագաւորական շնորհն ու երախտիքը ցուցուց։ Եւ գիտութիւնները ծաղկեցընելով ազգը ծաղկեցընելու ունեցած ջանքը՝ որ բոլոր աշխարհքի բերան տարածված է, աշխարհքս լեցուցած ազգայնները բոլոր հաստատուած իքէն, այս օրուան օրս իր կայսերական շնորհը անանկ մէկ աստիճանի մը բարձրացոյց, որ մեր երջանկութեանը չինուածոյն հիմը իւր կայսերական ներկայութեանը դնել տալու զիջաւ. և ասով թագաւորութիւնն ու ազգը իւր առաջուր ձեռքը ուրքի վրայ կայնեցուցնելը աշխարհի ցուցցուց. և մեր այս դպրատանս անունն ալ՝ ՄէՏրէՔԷ պի Իբդիէի ՄէՃիտիէ (Ամէճիտեան բժշկական դըպրատուն) ըսուելու համար իւր բարձր հրամանը շնորհեց։ Ահա ասոր նայեցէք որ՝ իրեն համբաւի չի գալու փառաւոր յիշատակներուն մէկն ալ իրեն մեծագոյն փառ անունը կրելու արժանի եղած չըլլալով, միայն այս մեր դպրատունը այս փառացս արժանի ըրաւ. և հասարակութեան օգտակար գիտութեանց և իմաստութեանց կատարելագոյն փափաք և յօժարութիւն ունենալը յայտնեց։ Այլ աշակերտք. այսքան երախտեացս և բարերարութեանցս հարիւր հազարէն մէկին շնորհակալ ըլլալու ըստ արժանւոյն՝ մարդ չի կայ որ կարող ըլլայ։ Գիշեր ցերեկ պարտքերնիս եղած աղօթքը վեհափառ Ինքնակալին համար՝ բերնէ չի ձգելով, տէրութեան բոլոր հպատակաց՝ որոց ամէնուն վրայ անխտրաբար վեհափառ Ինքնակալին շնորհը կը տարածի, և մանաւանդ կայսերական զօրաց առողջութեան և բժշկութեան համար՝ որ ազգին փառացը և պատուոյն պահապանները են, և անոր համար տէրութեան այս փառաւոր դորձոյս մէջ կը ծառայեն, առ հասարակ ասանց առողջութեան աշխատելու յարմարութիւն և բաւականութիւն տուող գիտութեանս մէջ յառաջադէմ ըլլալնուս զատ մեր ձեռքէն ուրիշ բան չի գալիքը գիտնալով գիշեր և ցերեկ աշխատիմք. և վերջապէս ասանկ մէկ Ինքնակալի մը ծառայ կոչուելու արժանաւորութիւն ունեցող ծառայները և հպատակները ըլլամք»։

—Վեհափառ կայսեր պալատականներէն Բաղիսպ պէկը, որ անցածները յատուկ պաշտօնի մը Պաղատա, և անկէց Հիճազի կողմը խրկուելը ժամանակին ծանուցած էինք, հետը քանի մը բժշկութեան կայսերական դպրոցին աշակերտներէն քանի մը հմուտ անձինք առած էր. որ ճամբու վրայ հանդիպելու տեղերը տակաւին ծաղիկ հիւանդութենէ չի բռնուած ազգաց ծաղիկի պատրաստ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՌ

Որ խօսուեցաւ ամսոյս 9 ին Խասգիւղի սուրբ Ներսիսեան դպրոցին ընդհանուր քննութիւնը սկսուելէն առաջ յարգի պարոն Կարապետ Տէր Մատթէոսեան նոյն դպրոցի հայկաբանութեան ընտիր դասատուէն յօրինուած։

Պարոնայք, Աստուածասիրաց հանդիսականներ, վարժարանիս պայծառութիւնը բարենախանձ յօժարութեամբ ցանկացողներ, ի՞նչ անպարտ բերիրութիւն, ի՞նչ նորօրինակ զմայլեցուցիչ արդիօք, Հայրենասիրին դէր-բաղձած հոգւոյն, որ այս երիտասարդաբարոյ ալ յիր պապանութիւն ծողովը գոնարած կը պենայ իմաստութեան յարիւն ձեռքը. և յայտ յանդիման յիր դէմին վերայ սիրայորդոր մտքանութեան երեսոյն՝ մանաւանդ Հայրենեաց գաւառացը նախանձայնորդութիւն նկարուած դիպուածը գոնելով հայկական ոգեգորդ ոգւոյն բնապոր յիրէն՝ և գողոյ հնչմամբ նշանաւոր օր պարեկանաց. ինչ որ Աղգասիրաց արդեն խայտանչը արտաքին երեսոյնէն յար և նման կը գուշակէ այն պանոպերին՝ որ իր առապարիր արդիւնաւորը բեղմնաւորած անդասպանին գլուխը ակոմբ կալմելով՝ բարութիւն որոյներ կապելու յուսով և պապարոն է. կամ լաւ որ ըսենք, Արիսպոսի օրինակ գուած իմասպոն վաճառականին նման՝ Հայասպանին աւերմունդուն ներոյթը լաւագոյ ճանապարհ բանասիրութիւն անգին մարգարիտը գտնելով՝ ամէն ընչ բաղանչ ու հոգ կը ծախէ՝ անիկայ գնելու և իւրացնելու դիպաւորութիւնամբ։

Հապա՛, ո՞վ վեհամիտ պարոնիդ, ի՞նչպէս իրաւունք լուսնեանոյ Հայրենասէրը՝ Աղգիս գերազանց երջանկութիւնը նախադրուն սեպել՝ յեր վեհմանութիւնը ազգասիրական դիպաւորութիւնը, որ պաշտպան առնելով դիւրութեան սիրոյ և բանի և գրով ջանացող Սրբազան անմահ ոգին, դարերէ՝ ի վեր աւանութեան գիշերով հեռացած՝ իմաստութեան արեւուն ծագմանը աւետարար արշալոյսի նման՝ Հայաստանի մանկանց աչքնկալութիւն կոսպոյ՝ կրթութեան դիջցներով նախնեաց ջերեղ անուանը նորէն հաստատել աշխարհի, և դիպերնուն ասպուածապարար հայրենի արծող փաղանդը հեպղեպէ երեսան հանելով՝ Աղգիս գերեկ մոցուածի պէս եղած համբաւոյն նորոգող ըլլալ, որ իմասպանդիր Սիկենանդրու կարգոնութիւնէն երիտասարդ ապեն անգրդ ճանալով՝ ծանգահարած կը կարծուէր. Ընդ՝ի աշխարհէ իրոպեանն . . . Երանի՜ բերիրական ծամուն . . . ։ Ո՞ր է, ընդ՝ներկայ գանուի, պարագլուխ կենաց ջերեղանդիս ծողովոյ՝ թնդրգոնեան դիւցազնոյն անմահ ոգին, և հանդիսարար ըլլայ ցուցած զանկներուն հայրենասիրութեան երանդեանը, ինչպէս որ երբեմն ամբարջարութեան հիմնադրին դէմ մարպարդիր պղաչը ու ընդանդիրը՝ իշխանութեան գանոգրին է, որ յեր յարգեանութիւնը համարիւն ըլլալով՝ յեղմովելի ոգին է, որ յեր յարգեանութիւնը հանդիսանալ՝ ինչ գոյ ինչ ինչ ինչ ինչ գոյ ինչ ինչ ինչ գոյ ինչ ինչ ինչ գոյ

(աշ) ընէ. որով վեհափառ Ինքնակալին առանձին խնամքը այն տղայքը այն հիւանդութեան վտանգէն ազատ մնան։ Այս օգտակար գործս կատարել տալով յիշեալ աղնիւ պաշտօնատարը, և իւր ճամբան երթալով Սիվաս պատահեր, և հոն ալ մեծաղօր տէրութեան հպատակ բազմաթիւ տղայոց վրայ այս գործողութիւնս ընել տալով անոնց կեանքը այս ախտիս կողմէն ապահովեր է. ինչպէս որ նոյն երկրէն տէրութեան բարձրագոյն դուռը խրկուած ծանուցական գրերէն իմացուած է։

— Խափու քեահեասի Սիւֆիդ պէկը աքքունի գանձատան խորհրդին անդամ անուանեցաւ։

— Նէպիլ պէյը Պաղեստինի ընդհանուր կառավարչին խաբու քեահեասի կոչուեցաւ։

— Աօտերս վեհափառ Աքքայն վերատին պայելութեան գնաց ղնիւորական դպրոցը և երկու ժամէն աւելի մնաց հոն։ Ղինիւորական դիտութեանց ընտիր դասատու քանի մը երեւելի գաղղիացիներուն հոգատարութիւնը այս դպրոցն ալ Գաղղիայի զինուորական դպրոցներուն բարեկարգութեան կողմանէ հաւասարելու շատ բան չէ մնացած։ Քանի մը կանոնագրութիւններ կային որ այս տեղի բնաւորութեանը և սովորութիւնը չէին յարմարեր, անոնք բարեխառնելու հարկ ըլլալը նոյն օրը վեհափառ աքքային իմացուցին որ իսկոյն ընդունեց։

— Ինչպէս որ լրագրաց ակէց առաջ հրատարակված թերթերովը իմացուցեր էինք, որ արժանապատիւ Սիւհսին էֆէնտին Էվքաֆ Դիւրիի անուանեցաւ։ Այս պաշտօնս առ այժմ անգործ պիտի մնար. որովհետեւ Էվքաֆ խալէնէսի ըստուած շէնքը, որ այս պաշտօնիս յատկացեալ տեղը պիտի ըլլայ, տակաւին լրմընցած չէ։ Բայց մինչեւ որ ասիկայ լրմընայ նէ՝ պէտք է որ բարձրագոյն դռան խալէֆներէն եղած թուղթերը պահելը և կարգադրելը սկսուի իբրեւ նախապատրաստութիւն, որ յիշեալ շէնքը լրմընայ նէ՝ առնք այն ժամանակը կարգին դնելու համար ժամանակ չանցնի. ուստի արդարութեան վճռոց դերագոյն ատեանին ժողովարանին մօտ՝ այն պաշտօնատարիս յատուկ սենեակ մը որուեցաւ։ Եւ որովհետեւ այս պաշտօնատարիս պահպանութեանը յանձնուելու թուղթերը ըստ մեծի մասին յիշեալ ատեանը մնցած կամ անկէց եղած թուղթերը պիտի ըլլան, այս պաշտօնս վարողն ալ յայտնի է որ նոյն ժողովոյն հետ կցորդութիւն մը ունենալու է. և ինքն Սիւհսին էֆէնտին ալ՝ ի բնէ ատանկ բաներու վարժ և նոյն ատեանին վերաբերեալ բաները որոված մարդ մըն է, ուստի իրեն պաշտօնին յաւելված ըլլալով յիշեալ էֆէնտին արդարութեան վճռոց բարձրագոյն ատեանին անդամ անուանեցաւ։ Եւ բուն իսկ պաշտօնը երեւելի և կարեւոր պաշտօններէն ըլլալով՝ Ֆէրիոյ-Ռիեան անունն ալ Նապէրոյ-Ռիեան փոխուեցաւ. և արժանապատիւ Սիւհսին էֆէնտին ասկէց եւքը իւր պաշտօնին անուամբը չէ թէ էվքաֆ Ֆէրիի, այլ էվքաֆ Նապէրի պիտի կոչուի։

— Յորենի սղութեանը պատճառաւ պէտք եղաւ այս օրերս վաճառանոցը ծախված հացերուն կշիռքը քիչ մը ինչնալու։ Բանը երկար ատեն այս վիճակիս մէջ չի մնալիքը, և հիմակվան հացին պըղտիկութիւնը առժամանակեայ բան մըն է. բայց որովհետեւ ասոր համեմատելով ուրիշ ապրանքներուն գիներն ալ բարձր ըլլայ նէ՝ հատարակութեանը շատ նեղութեան պատճառ պիտի ըլլայ. ուստի մեծաղօր Ինքնակալը հատարակաց նեղութիւնը մէկ ուրիշ կողմէ մը թեթեւցընելու մտօք իր բարեգթութեամբը կարգադրեց որ՝ քանի որ հացը ատաղ է նէ՝ գոնէ մրսին դիմը պակաս ըլլայ. և միտը՝ որ ասկէց առաջ կառավարութեան պատած գնովը հօքան 96 փարայ պիտի ծախվեր, ասկէց եւքը ամէն մէկ հօքայէն վեց վեց փարայ վար ինքնցընելով՝ 90 ական փարայ պիտի ծախվի։ Եւ մեր այս գինս մշանջենաւոր այսպէս պիտի չի մնայ. երբոր ժամանակ որ հացին հիմակվան սղութիւնը քըշէ նէ՝ միտը այս գնովը պիտի մնայ. երբ որ՝ Ստուծոյ ողորմութեամբը, հացը դարձեալ ամենովի առաջին գինը գտնէ նէ՝ միտն ալ առաջին գնովը ամէն մէկ հօքան 96 փարայ պիտի ծախվի։

— Պէհէնիի և Հատանմանուրի գաւառներուն մէջ պըտրտող տարեանը Բըշմանի իսուած թափառական ցեղը տերութեան կանոնաց անհնազանդ ըլլալով՝ մեծաղօր Ինքնակալին բարեգութ կամացը դէմ այն կողմերը բնակողներուն շատ նեղութիւն կուտային։ Այսիկայ գիտնալով կայսերական Օսմանեան դօրաց ստորաբաժանութիւն Օսմանի փաշային՝ տերութեան հպատակները այս նեղութիւններէս և զրկանքներէս ազատելու համար վրանին բաւական զօրք հանեց։ Ստորամբները թէպէտ սրատես և ամէն տեսակ կռուելու պատրաստ, բայց զինուորական կանոնաւոր կրթութիւն չունենալնուն համար Օսմանի փաշային զօրաց յարձակմանը չի կրնալ դիմանալիքներին խելքին կարելով փաշային դիմութեանը ապաւինեցան, ներքամ խնդրեցին. և հատատ խօսք տուին որ մէկ մըն ալ անանկ ուրիշի վնաս հասցընելու չելլեն։ Փաշային ատոնց խոստմունքը ընդունելով յանցանքներն ներեց. իր կողմէն ալ հաշտութեան պայման այն դնելով որ՝ որ տեղաց որ անտուն կամ ուրիշ ըռազակ զողերը են նէ՝ անոնք ամէնքն ալ իւրաքանչիւրաց տերոջը հետ տան. և իւրենք ալ Թատարական պըտտելը մէկդի ձգելով՝ այն կողմերը իրենց մշանջենաւոր տեղ և բնակութիւն հատատուն։ Անոնք ալ փաշային հրամանին յօժար սրտիւ հնազանդեցան. և առած բաներնին ետ տալու հիմակուց սկսած ըլլալնին՝ նոյն բարձրատատիւ ապարատեսին կողմէն բարձրագոյն դուռը եկած նամակներէն իմացված է։

— Խարէնեյի գաւառին կուսակալ բարձրատատիւ Դահիր փաշայն այն տեղի օդը և ջուրը իր առողջութեան վնասակին անյարմար գտնելով՝ մեծաղօր Ինքնակալին աղերսեց որ իր հրաժեշտը ընդունի, և հրաման տայ որ ամէն հոգէն ազատ ըլլալով հանգիստ կեանք վարէ իւր ծովեղերեայ ապարանքին մէջ։ Մեծաղօր Ինքնակալը այս ծերունի բազմերախտ բարձր պաշտօնատարին աղերսը ընդունելով՝ փաշայութեան պաշտօնէն և գործէն հրաժեշտը ընդունելով փափաքած հրամանը տուաւ. և անոր տեղը Խարէնեյի կուսակալ ըլլաւ ասկէց առաջ Ազգական աքքունի բանակին ապարատեսն (Ընտրելոց սէրասքերի) բարձրատատիւ Միւսդէմ փաշայն։

— Թեահատխանէյի գետին ջուրերը անուշ ըլլալով Մոյրաքաղաքիս օգուտը խնդրող մարդիկ ուռաջարկեցին տերութեանը որ այս գետին անուշ ջուրը ծովին ջուրին հետ երթալ խառնուելու թող տրուելու տեղը հնարը գտնուի որ մօտաւոր գեղերուն ու արուարձաններուն աղբիւրներուն խառնվելով ամառը ջուրի նեղութիւն քաշող տեղուանքներուն օգնութեան հասնի։ Այս գործը վրանին առնող տեսչները և երկրաչափները որոնց առաջուց ալ պաշտօնն է ջուրի վերաբերեալ բաներուն հոգ տանիլ, կը հաստատեն որ այս Թեահատխանայի ջուրին մէկ մասն ալ Պոխաձէ գեղի կողմերը դարձուցնելով՝ այն կողմերու ջուրի սատակ նուազութիւնն ալ կը մոռցունէ։ Նոր շինուելիք ջուրի ճամբուն մէկ ճուղն ալ յիշեալ անուշ գետին վրան ձգելն սկսելով կրնայ երթալ հաղորդիլ մասլախի ջուրերուն. ասանկով Պէյօղլուի բնակիչներն ալ ջուրի նեղութենէն կ'ազատին։ Սոնկ մէկ օգտաւոր առաջարկութիւն մը անտարակոյս ընդունելի պիտի ըլլայ բարեգութ Աքքային։

— Օրագրիէն իմանալով որ Թատատիա տան մը մէջ սատ դրամ կը կոխուի, յանկարծ կոխուց տունը և յիրաւի դատաւ հան այս խարդախութիւնը ատուելուն զանազան մեքենաները և գործիքները։ Տանը տէրը որ երեսը պահեր էր, Պէյօղլուէն այս օրերս դատուեցաւ. և իւր դատատանը կարուելու համար առ այժմ բանտն է։ Այս մարդը իրեն ընկերներ ալ ունի տէրի կը կարծուի, ուստի անոնք ալ դատելու եռեւեռ են զարթիւէն։

— Մէկ երկու ամիս առաջ իմացուցինք որ Պօսպան ընկերութիւնս լա-վերահասու ըլլալով՝ ճշմարիտ սիրելի բանը՝ երիտ ազգի մը յառաջադիմութիւն ծաղկեցնելու համար բարեկրթութիւնէն կիսուտ ոգի, և ուրիշ ասոր պակասութիւնը մեր ազգի համար՝ քանի որ մեր ազգին ոգի՝ գրեթէ մեր ազգի մէջ յառաջադիմութիւն ծաղկեցնելու համար բարեկրթութիւնէն կիսուտ ոգի, և ուրիշ ասոր պակասութիւնը մեր ազգի համար՝ քանի որ մեր ազգին ոգի՝ գրեթէ

ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՁԱՏՐԻԱՐՔ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՊԵՏՔ ՆԵՐՍԷՍ ՀԱՅՐԱՊԵՏ

Մինդեռ ոգի՝ բանասիրին ԱԼՅարատեան Սուլայից
Զուլ գիւցազանց՝ քաղէ համբաւ՝ հագնեցիր լաւ զգեստից,
Եռանդ ջերմի՝ տաժէ յանձին ճաշակ տուեալ հեշտալից
Ոլ և 'ի տան՝ մերայս Հայոց՝ երմամբ հնչեն սգելից։
Ծաղրագունին՝ ապա 'ի ԳԵՀԱՆ՝ ուր են հանդէսք՝ ուր Սուգայ
Մեղ գաշնակել՝ մտաբն բերցէ՝ յոսկի քրնաւ Եւսեբիոս։
Դու՝ յա ապրեալ՝ Ամենակալ Հոգիդ Աստուած՝ սիւգ շարհայ։
'Ի բան հանիրդ՝ ձրգել զմոտ՝ նուէր ԳԵՀԱՆ հայկազանց։
Դա աւանիկ՝ որ ԷԹԵրին՝ ակնառարար լուսարիւեայ
Շարհեսս փայլել բացառաձանչ՝ լոյս զանազան զամբարայ։
Եւ զիմ մտայ՝ գոնս փարատեսն Թաս փարագոյր մթնադրեայ,
Զնոսել բացատոս ԱՆՍ հոգակաց՝ ԱԼՅարատայ շուք փառաց։
Բարատեսան՝ մեծ Պարթեւին՝ ոչ նոյն լոկ սա տիպարք,
Նոյն և անուն՝ համբաւատուն՝ նոյն և հանդէսք գերարեան։
Սրան Արեւ՝ յարձիաս Եբրեմն՝ ելեալ 'Լդրա 'ի մարտին,
Յարմանակաւ մինչ գարձ տանել՝ ճակատամարտ ընդ պարսկին։
Էր տեսանել՝ անդ գարձաղարձ՝ բանից յարձանք 'ի պայքար,
ԱՅԺԵՆասայ ընդ Արեսի՝ ո՞ ար լոկ ԳԵՀ ՍՏՍ ԱՑՐ։
Ս · · · · · · · · · · · ·
· · · · · · · · · · · ·
Հ · · · · · · · · · · · ·
· · · · · · · · · · · ·
Ապա խնդ՝ ԴԱ շարք գնէ՝ տարբ՝ փարժից հրահանգաց,
Որոմ մնան դարեաց պարակք՝ քան Հայաբին գիւցազանց։
Յայս վայր ունդեն հատ ԱԼԹԵՆաս՝ բանիցն զմեզ զԱրեսին,
Մի դա խարիր՝ քանզ տատուծոց՝ ասաց՝ կարաւ ամ՝ բանի։
Բարատն և դա՝ ոչ տեսանես՝ խարամալ 'Լ ԳԱՀ ապրանթեան՝
Փաւիայ անդաստ՝ ազգին անեռանց՝ 'Լ սեր Ազգին շինութեան։
Առ այս կանգնեսց ինձ ԱԼԹԵՆայ՝ շքեղ Տաճար 'Լ Տփխիս,
Մանկանց 'Լ վարժ 'Լ կրթութեան՝ շահել անծանց բիւր բարիս։
Պարծանք ըզ ՍԱ Բարանգեսայ՝ կարդան մանկունք որ ինեն,
Նոր ԱՐԵՆԵՍՍ Հայոց մեծայ՝ յաղդէ ըլնիկ 'Լ պարթեւ։
Եւ զի լեցիս՝ քաջ խելամեսս՝ զոր քեզ տաեմ ես տասէն,
Ըստ զինչ մնալիկ՝ վասն ՍՈՐԱ ազգ Հայաստան՝ տա՝ մեծ դէն։
Տա՛ր տեր տաէ՝ ՀԱՅՐԱՊԵՏՍ մեր ՆԵՐՍԷՍ կենտ երկար,
Հոգաս զի զեր հոս ըզ լուսածին խնամել ըզնա հայրարար։

ՈԳԵԱՑ ՆՈՒԱՍՏ

ԳԱԲՐԻԷԼ ԴՊԻՐ ՓՕԹԻՇԱՆՑԻ

Ներքեւոյ Թատրն վրիպակները։

Էջ	Տող	Սխալ	Ուղիղ։
10	15	Ամարինին	Ամարինին։
10	48	Մակերեւոյթներուն	Օդերեւոյթներուն։

նայի կողմերը խռովութիւն կայ, և այս երկրին ընդհանուր կառավարիչ վեսմափայլ Ռեամիլ փաշան ալ այս խռովութիւնը հանողներուն գլխաւորները ձեռք ձգելով հանդարտեցոյց. հիմա յիշեալ փաշան այն բռնած մարդիկը հոս խաւրեց որոնք երեսունի չափ կան։ Արդարութիւն բարձրագոյն ատենին մէկ անգամ ներկայացան բայց դեռ վճիռնին չի կըորըվեցաւ։

— Օսպիթիէի վեսմափայլ Հաֆըզ փաշան ելաւ իւր պաշտօնէն. տեղը առ այժմ վեսմափայլ Ի. յուսպ փաշան յաջորդեց։

ՍԵԼԱՆԻԿ, 5 Փետրվար։ Յորենի չափաղանց աղուութենէն ժողովուրդին մէջ անցեալ հինգշաբթի խռովութիւն մը բրթաւ ու հաղարաւոր մարդիկ հնեղէնի վաճառանոցին վրայ յարձակուեցան։ Բարեբաղդաբար քաղաքապետը արթուն գտնուելով իսկոյն այս խռովութիւնը առջեւը առաւ. և թէ Տաճիկ և թէ Եւրոպացի վաճառականները իսկոյն հրաւիրելով սիրով յորդորեց զանոնք որ մէկ ամիսի չափ քաղաքէն ցորեն դուրս չհանեն որ ժողովուրդը հայի նեղութիւն չի քաշէ և քաղաքն ալ ապահով ըլլայ։ Վաճառականները սիրով ընդունեցին վեսմափայլ Եագուպ փաշային խնդիրը։ Ուստի հիմա Սելանիկի շրջակայ գիւղերէն կարծր և կակուղ ցորեն դուրս հանելը արգելուած է մինչեւ մէկ ամիս. բայց հաճար, եգիպտացորեան, գարի, ասոնք ազատ են։ Աբաքնասէր Եագուպ փաշան մինակ այս խեղճ ամբան բռնելով չը շատացաւ հապա 200 հաղար ղուռուշ ալ իւր գանձէն կարօտելոց պարգեւեց։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱԴԻԱ։ Ֆռանսոյի Թագաւորին տղան Օմալի դուքսը՝ որ Ֆռանսայի մէջ ճանապարհորդութիւն կ'ընէ, գացած տեղերը ըրած առատաձեռնութիւններովը իր յիշատակը անմոռանալի ընելու կը նայի։ Թէ մասնաւոր մարդոց տուած ողորմութիւնները, և թէ աղքատներու համար շինուած տեղերուն ձգածը՝ 3000 ֆռանքը անցած է. (որ կը նէ 12750 ղուռուշ)։ Եւ ասկէց զատ հրաման ըրաւ որ՝ իրեն գերանին անտառներուն մէջ այս ձմեռս այն աղքատներուն բանելու բան բացվի, որ բան չի գտնելնուն համար խեղճութեան մէջ ընկած են. և այս բանիս համար ալ 30,000 ֆռանք (127,500 ղուռուշ) ձգեց։ Մէյլսէ տեղը Դրաբբիսդ ըսուած կրօնաւորներ կան, որ ասոնք ալ երկրագործ են, և վասարկածնին ալ իրենց համար չէ. աղքատներուն շատ օգնութիւն կ'ընեն. ասոնց ալ 600 ֆրանք (2550 ղուռուշ) տուաւ, որ կով ոնուցանելու ախոռ մը շինեն ամէն պէտքովը։

ԱՆԳԼԻԱ։ Առաջկուց լսուած է որ Եւրոպայի քանի մը ազգ, և գլխաւորապէս Ինկիլիզները՝ Ռաբօնի հետ վաճառականութիւն ընելու կը վարվին. բայց Ռաբօնի տէրութիւնը կը յամառի. անոնց մէկն ալ իր երկիրը չի մտցեցներ։ Ասոր վրայ Ինկիլիզի Ռոռինկ Ռոռինկ գրագիրը՝ Ռաբօնի հետ հաղորդակցութիւն ունենալու համար Եւրոպայի ուրիշ տէրութիւններուն ամէնէն ալ տարբեր է. ասկէց երկու հարիւր տարի առաջ մենք անոնց հետ և անոնք մեզի հետ վաճառականութիւն կ'ընէինք, և հին պայմաններնիս նորոգել ուզելով՝ իրաւունքի տեղ ուժ բանեցընել չէ մեր բաժը։ Ուստի մենք այս ճամբան բռնելու ըլլանք նէ՝ մեր խնդիրը իրաւացի կ'ըլլայ. և Ռաբօնի կայսեր կառավարութիւնը ասոր դէմ ըսելիք մը չի կրնար գտնել։

ԲՐՈՒՍԻԱ։ Այս Թագաւորութեանս երկրներուն արեւելեան մասին քանի մը գաւառներուն դատարանները սոխրութիւն կար, որ բանի մը համար վկայութեան գացողները երկար խօսքով շինված մէկ երդումի մը կ'ընէին։ Թագաւորը մօտերս առանձին հրամանագիր մը հանեց. որ քրիստոնեայները, ինչ կրօնքէ և աղանդէ ըլլան նէ ըլլան, թէ որ դատաւորի առաջ վկայութիւն մը տալու ըլլան նէ՝ այս երդումն ընելէն ազատ ըլլան, և միայն այսքան ըսելայ ընելու երդումնին։ «Երդում կ'ընեմ Աստուծոյ առաջը, որ ճշմարիտը ամբողջ և անպակաս ըսեմ. և ճշմարիտէն զատ բան չըսեմ»։

Այս խօսքս պիտի զրուցէ դատաւորը՝ և կարվկայնին երդում ընել տալու ժամանակը. և վկայն ալ բառ առ բառ այս խօսքս պիտի կրկնէ աջ ձեռքը վեր բռնելով անանկ, որ երեք մատը, այսինքն մեծ մատը, ցուցամատը և միջամատը վեր պիտի անկըվին, և մէկալ երկու մատը դէպ ի ափին մէջը դոցված ըլլան։ Բայց մնացած երեք մատը պիտի ցրցընէ որ ըրած երդումը սուրբ Երրորդութեան վրայ է։

Դատաւորը երբ որ յարմար տեսնէ նէ՝ կարող պիտի ըլլայ այս երդումս տալէն առաջ երդում ընելու պատրաստուած վկային յիշեցնել թէ երդումը ինչ մեծ և ծանր բան մըն է, և խրատ և յորդորելով սուտ երդում ընելէն զգուշանայ. և ինչ բանի համար երդում կ'ընէ նէ՝ այն բանը կատարէ։ Եւ վկայն երդում ըրած առտեղը՝ դատաւորական աստեանին ներկայ գտնուող անձինքը ամէնքն ալ տաքի վրայ պիտի գտնուին։

— Բամբակէ վառօդին որպիսութիւնը քննելու յատկացած վարպետները իրենց քննութեան ելքը կառավարութեան իմացուցին գրով։ Ասոնց գրութենէն կը հասկցուի որ հատարակ վառօդը աղէկ է, և բամբակէ վառօդին գործածութիւնը աղէկ չէ։ Այս բանիս վրայօք պատճառ բերածնին ասոնք են։

1. Բամբակէ վառօդին ուժը և գործը անհաւասար է. հատարակ վառօդը հաւասար ուժ ունի. և գործը հաւասար կ'ընէ։ Ուստի ուզած տեղդ հատարակ վառօդով նշան կրնաս առնել. բամբակէ վառօդով չես կրնար։

2. Բամբակէ վառօդը հատարակ վառօդէն շատ դիւրաւ կը բռնկի։ Ութսունի ջերմաչափին 70 աստիճան տաքութիւնով բամբակէ վառօդը կը բորբոքի. հատարակ վառօդը բորբոքելու համար 240 աստիճան տաքութիւն կ'ուզէ։ Որով բամբակէ վառօդը թէ շինելը, թէ պահելը և թէ տեղէ տեղ տանելը, հատարակ վառօդէն շատ վտանգաւոր է։

3. Խողովակաձեւ ատրճանակի մէջ բամբակէ վառօդը սխմեսնէ բան չըներ. ուստի ֆիշէնի շինողները հաստատապէս հատարակ վառօդի կարօտ պիտի ըլլան։

4. Բամբակէ վառօդով հարդարուած շինելը շատ ուշ կ'ըլլայ, ինչ տեսակ ըլլայ նէ ըլլայ։

5. Հետեւակ զօրքերուն գործածած ռիֆլիներուն և հարապինաներուն և բիշոֆներուն բամբակէ վառօդ գործ չածուիր. այս տեսակ վառօդին գործածութեանը համար այդ զէնքերը բոլորովին խափանելու և շինքերնին փոխելու է։

Այս պատճառներս ցրցընելէն ետքը գրութիւնը վերջ կ'ընէ ըսելով, թէ բամբակէ վառօդը զինուորներուն բանին չի գար։

ԻՌԼԱՆՏԱ։ Այս տարուան Իռլանտայի սովին սաստկութիւնը հասկցընելու համար օրագիրները հետեւեալ պատմութիւնս կ'ընեն։

1845 ին՝ Քօռք քաղաքի դատաւորը ջրոս հոգիի համար մահուան վճիռ տուաւ. որովհետեւ մարդ սպաններ էին։ Այն տարւոյն օգոստոս ամիսէն՝ ի վեր ասանք ջրան ալ մէկ գեղացիի մը տուն պահուած ըլլալով՝ ոչքան փնտռուեցան նէ ձեռք չանցան. մինչեւ որ այս գեկտեմբերի մէջ իրենք իրենց կամօք ելան և քաղաքին Բօլեցիոյին գնացին։ Անկերնին ըսաւ. հիմա մենք որ ձեռք անցանք նէ՝ գիտեմ որ ազատելիք չունիմք. պիտի կախվիմք. բայց այն խեղճ գեղացին որ մինչեւ հիմա մեզ կը պահէր, հիմա իրեն ուտելու համար հայ չունի. և մեղի աւելի աղէկ ելեւէջաւ կախվիլ ու մեռնիլը, քան անօթութեամբ տառապանքը քաշելով երկար հոգեվարքով մեռնելնիս։

Ասոնց մէկը ասկէց քանի մը տարի առաջ հսկայ մարդ մըն էր, ուժին դէմ մարդ չէր կրնար կենալ. հիմայ անանկ նիհարացեր և վատուժցեր էր որ, թէ պէտ առաջկուց ամէնուն ճանչցած մարդն էր, բայց այս անգամին մինչեւ որ անունը չի տուաւ նէ մարդ չի կրցաւ զինքը ճանչնալ։

ԱՕԳԱՅԻՆ

— Մեր յարգի բարեկամներուն մէկը հետեւեալ նամակը կը խրկէ մեղի որ օրագրոյս միջոցաւը հրատարակեմք. մենք ալ ինչպէս որ գրեր է նէ այնպէս գրելէն ետքը՝ մեր մրատաժութիւններն ալ նոյն նիւթոյն վրայօք՝ առանձին կ'ենթակցընեմք. մեր յարգի բարեկամին և ուրիշ ընթերցողներուս խորհրդածութեանց նիւթ տալով։

«Մեծարոյ տեարք. Յ. Պ. Տ. Կ. ջամուռաճեանց, և Մ. Աղաթօն։

«Վենետիկոյ մեծահռչակ Մխիթարեան միաբանութենէն հանգուցեալ մեծապատիւ Հ. Մկրտչէ Զամչեան վարդապետին անխոնջ աշխատութիւնքը, 1786 տարւոյն՝ յօրինուած Հայոց պատմութեան երրորդ հատորին մէջ ազգին տառապանաց ողբալի թերթերը կարդալնիկի, որպէս խորին տրտմութիւնը յանկարծ քաղցր մխիթարութեան վերածեց այս յօդուածը. «յաւուրս Ուրբանոսի ութերորդի (պապաւն Հռոմայ) Պօղոս Բանանիայի որ եղեւ եպիսկոպոս Ունիթօռայ՝ ի Նախջուան՝ գնացեալ՝ ի հնդիկս և յայլ տեղս, և ապա Մէքսիկայ, ժողովեաց արծաթ և ոսկի բազում. և դարձ արարեալ անտի յորժամ եհաս՝ ի Սպանիա, մեռաւ անդ. և զոր միանգամ ժողովեալն էր՝ եթող զամենայն կուսակաւ՝ կանգնել նոքօք զպարտուն հայոց՝ ի Հռոմ» (էջ. 527)։

»Բայց ափսոս թէ ինչպէս շատով այն քանի մի ուրախալի վայրկեանները ինձմէ փախչելով՝ կրկին տրտմութեան և զարմացման մէջ ձգեցին զիս ապագայ այս խօսքերը. «Այլ դեռ ոչ եդաւ այն՝ ի գործ. և սակայն՝ ի տեղի առանձին դպրատան ընկալեալ եղեն ոմանք՝ ի մանկանց հայոց՝ ի հասարակաց դպրատուն, որ ասի Բրօքսիանոսյու, ուսանիլ անդ և ձեռնադրիլ քահանայ և առաքիլ՝ ի քարոզութիւն»։

»Բոլոր ասանք մեծ հետաքրքրութեան նիւթ եղուցան ինձի, մինչեւ ալ չի կրնալով շարունակել իմ վերծանութիւնս վերջացուցի։ Լոգ մը ախուր ու ուրախ խառն՝ երկբայելի խորհրդածութիւններ ընկրան միտքս պաշարել։

»Կը մտածէի այն խնամատուն անձին սատկիկ հայրենասիրութիւնը, աշխարհէ աշխարհ անխոնջ ընթացքը. քաշած վիշտերը, թափած քրտինքը, ու վերջապէս իր յարատեւ աշխատութեան պտուղը որ հաղիւ թէ պտղոր վայելելը։ Աւաղ. անդութ մահին դիւրահատ մանդաղը շուտով կը զրկէ զինքն ու բոլոր ազգին խեղճ ծնունդը այս միսիթարութենէն։ Ինչուան անդամ՝ որ անմահ պտղոր մնար, ժողված ոսկիին գումարին հետ անորոշ խաւարի մը մէջ կը թաղուի կը մնայ։

»Կը խորհէի թէ, ընդհանուր ազգաց համար արդէն բացուած եկեղեցական դպրոցի մը մէջ միայն քրիստոնէական կրթութեանց համար քանի մի հայ տղոց մուտքը կը հաստատանէ՝ արդեօք հայու-

ազգին աշխարհական ընդհանուր ազգ ուսումնական իրաւունքն։ Կը կատարէ՞ արդեօք միայն այս դիտաւորութեամբ շինուած կտակի մը նպատակը, որն որ եթէ գործքի դրուէր, երկու հարիւր քսան տարեկան ժամանակին ընթացքը քանի՞ արդեօք բարոյական և ուսումնական գիտութիւններով զարդարուած երիտասարդներու խումբ բեր պիտի նուիրէր ազգին։ Որչափ ընտիր ընտանիքներու բաղմութիւններ պիտոր գտնուէին այսօր ազգին մէջ...։ Վասն որ ազգը այս միջոցով դալու ընդհանուր բարիքներէն զուրկ մնացեր է մինչեւ այսօր։

„Կը զարմանայի թէ արդեօք ի՞նչ պատճառներով այս ստակին գումարը ու կտակին նպատակը անգործադրելի մնացեր են մինչեւ այսօր։ Արդե՞ք է մի արդեօք այնպիսի ժամանակ մը, ուր որ մեր հայրենասէր ազգակիցներէն ոմանք այսպիսի կարեւոր նիւթի մը վրայ որոշ տեղեկութիւններ առնելու, որ ճիշդ քննութիւններ ընելու եռեւէ եղած՝ այս խնդրոյս որոշմունք մը տան. ու թէ որ եղած է՝ ինչո՞ւ վերոյիշեալ պատմութեան ընթացքը չի ծանուցուներ։

„Վերջապէս, այսպիսի ու դեռ ասոնց նման խորհրդածութիւններու մէջ միաքս ծփաշնին՝ յանկարծ պատահելոյն ինձի յարգոյ պարոնք Ս. Աշնաւոր, ու Վ. Թիւլպէնճեան բարեկամներս. կարդացի անոնց պատմութեան վերոյգրեալ հատուածը. կրկնեցի իրենց բոլոր իմ խորհրդածութիւնները. ասոնց նման էր իրենց մտածութիւնն ալ։ Բաւական խօսակցութեան վերջը Պ. Աշնաւորին խորհրդովը փափաքեցանք հասարակաց հաղորդելու այս մեր խորհրդածութիւնները. մտածելով թէ անշուշտ կը գտնուին դեռ մեր ազգին մէջ այս նիւթիս վրայ ճիշդ տեղեկութիւն ունեցող անձինք, որոնք գուցէ բարեհաճին իրենց մտերմական ծանօթութիւնները մատուցանել մեզի. որով լեցուի մեր ու բոլոր ազգին ունեցած հետաքրքրական իղձը։

„Ուր էր թէ մեր այս փափաքը կատարած տեսնէինք։

„Այս նպատակով քաջալերեալ կը համարձակիմք մատուցանելու զայս՝ մեծարու տեսչագրի. խնդրելով որ՝ բարեհաճիք հրատարակելու ձեր Հայոսպան համբաւաւոր անկողմնասէր օրագրոյն միջոցով։

Պոլսոյ Կոսպանդնուպոլսոյ. Ընդ- Լ. Ռ-ֆէանց։
12—24 փետրուար 1847. Ս. Աշնաւոր։
Վ. Թիւլպէնճեան։

Այս յարգի ազգասիրաց ուղած տեղեկութիւններուն վրայօք առ այժմ խօսելու բան չունիմք. և մեզի կ'երեւի որ՝ Պօղոս Բոնոնիացիին ժողված և կտակով ձգած ստակին հետքը չի գտնուիր։ Թէ որ Պօղոսի ըրած կտակին տեղեկութիւնը Հռոմ հասած առեն ստակն ալ հոն հասած ըլլար նէ՝ այն բարեսէր եպիսկոպոսին կամքն ալ կը կատարէր։ Ուստի կ'երեւի որ՝ այն ստակը Սպանիա դոմինիկեան կրօնաւորաց վանքերուն մէկուն մէջ մնացած, և ԺԹ. դարուս սկիզբը՝ երբ որ Սպանիոյի քաղաքական փոփոխութեանց առեն վանքերուն ալ շատերը, և հաւանականաբար աւելի հարուստները կողոպտուեցան. և այն տեղաց եղած ստակները ոչ գիտէ որի ձեռք մնացին։ Թէ որ ասոր վրայ աւելի տեղեկութիւն փնտրուել պէտք ըլլայ նէ՝ աւելի Սպանիայի արձանագրութիւններէն և յիշատակարաններէն կը գտնուի, քան թէ Հռոմէն։

Այս ստակով կանգնուելու դպրատունը կրնա՞ր արդեօք ազգին օգտակար ըլլալ կամ չըլլալ, ասոր վրայ դատողութիւններս այսքանի միայն կը հանի, որ ազգային ուսմունքը յառաջացընելու միջոցը՝ թէ որ ազգին ընդհանրութիւնը լուսաւորելու մտքով պիտի ըլլայ նէ, հայոց բաղմութիւն գտնուած տեղերս ասանկ դպրատուն ըլլալ՝ ազգին ընդհանուրին օգուտ չրներ։ Վենետիկու բաղմերախտ միաբանութիւնը՝ սուրբ Ղազարու վանքը, և Վիեննայինը՝ պաշտպան սուրբ Աստուածածնի վանքը ազգային ուսմանց կեդրոն մը ըրին. բայց հարկ է խոստովանիլ որ՝ թէ որ հայաբնակ երկիրներուն մէջ ուսմանց համար ամէն մէկ երկրին իրենց կարեցը հաստատ դպրատուն չըլլար նէ՝ անոնց տպագրութիւնքը հրատարակած գիրքերուն օգուտը խիստ քիչ կ'ըլլար. գիրքը օգուտ ընելու համար հարկ է որ կարդացվի. կարդալու սէր ձգել տուողը ամէն մէկ տեղին դպրատուններն պիտի ըլլան։

Ազգին մէջը ուսմունքը՝ քարոզիչներու ձեռքով չի ծաղկիր. Բրօբականտայի դպրատուներն ելլողները քարոզիչ կ'ըլլան. վարժապետ չեն ըլլար. Պօղոս Բոնոնիացիին կտակ ըրած դպրատան աշակերտներն ալ քարոզիչ պիտի ըլլային. ուստի յիշեալ բարեսէր անձին կտակը թէ և ճիշդ կատարված ըլլար, և այն դպրատունը շինուած ըլլար. անանկ օգուտ մը չէր ըլլար ազգին, որ երկու հարիւր քսան տարիէ՝ի վեր այն օգուտէն զրկուած եմք ըսելով ցաւելու իրաւունք ունենամք։ Թէ որ ըսվի որ՝ այն դպրատունը ազգային ըլլալով կրնար ազգը դպրատան կառավարութեան կերպը և ուսանելիքը և ուսման ոճը ժամանակին պարագայներուն համեմատել, ասոր կը պատասխանեմ, որ թէ որ դպրատան հիմնադրին կամքը՝ դպրատան ընթացքին սահմանը որոշեր էր, և այն տեղաց ելլելու աշակերտները Ընթրուաց հետ միանալ և Հայաստան քարոզութեան երթալ կարգադրեր էր նէ՝ այն կտակը չէր աւրուեր. և Բրօբականտայէն աւելի մեր ազգին օգտակար մարդիկ չէր հաներ։

Բրօբականտայի աշակերտները, որ ֆօլէճի անունով ճանչցուած են. իրենցմէ ըլլալու օգտին առաջը անով դոցած են, որ ազգային ուսմունքը իրենց մէջէն գրեթէ բոլորովին դուրս հանած են. Հայերէն գրաբառ լեզուի մշակութիւն չկայ իրենց դպրատունը. որ իրենց նպատակին շատ հարկաւոր է. Հայոց եկեղեցական բաներուն վրայօք տեղեկութիւնները բուն հայազգի հեղինակաց գիրքերէն սորվելուն տեղը լատին գիրքերէ, և մանաւանդ Կլեմէս կալանոսին գիրքէն կը սորվին. որ սխալներով լեցուն ըլլալը Հ. Միքայէլ Չամչեան Հայոց պատմութեան մէջ, և ուրիշները յայտնած են. չէ թէ միայն հայազգի, այլ և օտարազգի հեղինակներէն ալ։ Հայոց հայրապետներուն վրայ այնքան տեղեկութիւն ունին, որքան որ Կլեմէս կալանոս ունեցեր է. և այս բանիս պատճառը՝ Հայերէն լեզուի ուսմունքը Բրօբականտայի մէջ ըստ արժանւոյն չի մշակուիր է։ Հետեւութիւնն ալ ի՞նչ է. այն է որ՝ նոյն ֆօլէճցիները թէպէտ և արժանապատիւ մարդիկ, ազգին մէջ յարգերնին իրենց արժանաւորութեանը չափ չէ. որովհետեւ իրենք ալ ազգին վրայ կատարեալ տեղեկութիւն չունենալով, չեն կրնար հասկընալ թէ ազգը որքան յարգութեան արժանի է. ուստի ազգը ըստ արժանւոյն չեն կրնար յարգել։

Նամակին յարգի հեղինակը կ'ըսէ. „Կը խորհիմ որ... եկեղեցական դպրոցի մը մէջ միայն կրօնական կրթութեանց համար քանի մը Հայ տղայ մուտքը կը հաստատեն՝ արդեօք Հայաս ազգին աշխարհական ընդհանուր տղոց ուսումնականութեան իրաւունքը„։ Բայց ես ալ կը խորհիմ որ՝ այն դրդրատան անօգուտ ըլլալուն պատճառ՝ այդ պարագայները չեն։ Ազգին կասը՝ կրօնքն է. թէ որ ազգը կորսընցընել չեմք ուզեր նէ՝ առանց կրօնական կրթութեան դպրատուն ունենալը ազգիկ բան չէ։ Կրօնական կրթութենէ դուրս ի՞նչ պիտի ասվիմք։ Կրօնական կրթութենէ դուրս կ'ըսեմ, ղպ չեմ ըսեր։ Տէրն մեր ըսաւ. „Որ ոչ ժողովէ ընդիս՝ ցրուէ„։ Այս ատուածային խօսքը՝ շատ խորին մտածութեան արժանի գործ մըն է։ Ազգը փիլիսոփայ պիտի ընես. արուեստաւոր պիտի ընես, բնագէտ կամ բնալոյծ կամ մեքենագէտ պիտի ընես. և ասոնք մի ազգը մէկ տեղ ամենի պիտի պահես։ Կը բօնակոն կրթութիւնը ասոնց հիմն ընես նէ՝ ազգը վատուսկեցար և գործդ ալ յաջողութիւն գտաւ։ Կրօնական կրթութիւնը դուրս ձգուի նէ՝ ուրիշ ի՞նչ կերպով որ պիտի ժողովես ազգը նէ. ժողովելու տեղդ կը ցրուես. ասիկայ անջրելի ճշմարտութիւն է։

Թէ որ ամէն ճշմարտութիւն քրիստոնէական կրօնից մէջ պիտի պարունակուի, և ճշմարտութիւնը մէկ է, տեսակ տեսակ ճշմարտութիւն չըլլար նէ, կրօնական կրթութեան հիմանը վրայ չի հաստատուած փիլիսոփայութիւնը էլէնոփայութիւն ըսվելու անդամ արժանի չէ. որովհետեւ ճշմարտութիւնէ դուրս ճշմարտութիւն փնտրելէ։ Աբսուեռուներուն մէջն անդամ կրօնական կրթութիւնը հարկաւոր ըլլալու տեղեր ունի. որոնք մի ըստ միոջէ բացատրելը կրնայ ամբողջ գրքի մը նիւթ ըլլալ. առ այժմ կ'աղաչեմ վերոգրեալ նամակին յարգի հեղինակը և բարեկամները, որ մեր առաջարկած խորհրդածութիւններն ալ իրենց մտածութեանցը նիւթ ընեն։ Ինձ այնպէս կ'երեւի, որ այս խորհրդածութիւններովս շատ օգտակար բաներու վրայ ալ միտք հոգնեցընելու ճամբայներ կը մնանվի։

— Մայիս 9 ին Խատիւղի մը Ներսիսեան դպրոցին ընդհանուր քննութեանը ներկայ գտնուող դաղլեցի գիտնականին մէկը սա հետեւեալ նամակը կը բարեհաճի մեզի գրելու։

„Արդոյ հրատարակիչք Հայաստան լրագրոյն։

„Փարիզէն Պօղոս հասնելէս քանի մը օր եաքը Խատիւղի հայոց դպրոցին հոգաբարձուները բարեհաճեցան զիս նոյն դպրոցի ընդհանուր քննութեանը հրաւիրելու. ես ալ այս հրաւէրը ինձի պատիւ մը համարելով սիրով ընդունեցի։ Լրբոր հայկաբանութեան քննութիւնը լմընցաւ, կարգը դաղլիաբանութեան եկաւ նէ, յիշեալ դպրոցի տնօրէնը ինձի աղաչեց որ հոն գտնուող ուրիշ դաղլեցի և դաղլիագէտ հայազգի քննիչներուն հետ ես ալ քանի մը խնդիր ընեմ աշակերտաց։ Այս առաջարկութիւնը հայոց ազգին մեծահամբաւ մարդասիրութեանը ապացոյց մը համարելով մեծ շնորհակալութեամբ ընդունեցի։ Զարմացայ երբ որ տեսայ որ մինակ տարի ու կէսէ՝ի վեր գաղղիերէնի հետեւողաշակերտները քերականական կանոնները լաւ կը ճանչնան, կադացածներնուն միտքը լաւ կը հասկընան, և մեր լեզուն մեզի պէս գրեթէ կ'արտասանեն։ Գաղղիերէնի մէջ ինչ յառաջադիմութիւն տեսայ նէ մաթեմատիքական սկզբանց և աշխարհագրութեան մէջ ալ նոյն յառաջադիմութիւնը տեսայ։ Հայերէն լեզուին մէջ ալ քաջ ըլլալին հոն ներկայ գտնուող հայազգի հայագէտները անաչառապէս վկայեցին։

Այս դպրոցին ուսուցանելուն կարգերը ու կանոնները հարցուցի, մեր Գաղղիայի նախակրթական դպրոցներէն ամենեւին անտարբեր գըտայ։ Հայոց ազգը անտարակոյս այս եռանդով քիչ ժամանակի մէջ շատ առաջ երթալով Վեհափառ Սուլթանին մեծ պատիւ պիտի ըլլայ ասանկ մէկ ուսման և կրթութեան բարեյօժար ազգ մը իրեն հպատակ ունենալը։

Այս նամակը ձեզի գրելս երկու մտօք է. մէկ մը յիշեալ դպրոցի հոգաբարձուներուն ինձի ցըցուցած մարդասիրութեանը շնորհակալ ըլլալ, մէկ մըն ալ Հայոց ազգին քաջալերութիւն մը տալու համար աշակերտաց յառաջադիմութեանը վկայելով. ուրեմն կ'աղաչեմ, արժանապատիւ Տեարք, որ բարեհաճիք հրատարակելու այս նամակս ձեր յարգապատիւ լրագրոյն միջոցաւը։

20 փետր. 4 Մարտ. 1847։ Մ. Երթիւս։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Մայիս 12 ին Մարսիլիայէն և Լիոնաւայէն առած լուրերնուս նայելով, հակառակ հովերուն պատճառաւը Միերիդայէն գալիք ցորենը և ալուրի նաւերը չի հասնելով, ցորենի գիները յիշեալ երկու քաղաքը շատ բարձրացեր են։

Միջերկրական ծովուն համար քննդատեալ եղած ցորեններուն քանակը և գինը ասոնք են։

35,000	քիլէ	Իպրահիլի կակուղ զուռուշ	25—26
10,000	„	Ռուսմելիի կարծր „	23
		Հնէզի նաւահանգիստը նաւը պիտի յանձնուի մաքսէն ազատ։	
20,000	„	Ռուսմելիի կակուղ „	24 1/2
		Պալքիսի նաւահանգիստը նաւը պիտի յանձնուի մաքսէն ազատ։	
18,000	„	Էգիպտացորեան „	20—21
		Հնէզի նաւահանգիստը նաւը պիտի յանձնուի մաքսէն ազատ։	

Պատրաստ ցորեն։

10,000	քիլէ	Աղօֆի կարծր
15,000	„	Իսմայիլի „
25,000	„	Ռուսմելիի „
8,000	„	Ռուսմելիի կակուղ
10,000	„	Գարի „
68,000		

Աֆիոն 170 զուռուշէն 155—160 ինչաւ, և բաւական կայ հոս այս ապրանքէն։

Թրմանի սերմ 25 զուռուշէն 25 1/2—26 ելաւ. ապրանքին տէրը 27 կ'ուզէ հիմա։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Փարիզը- Երիրագրծ-Ռեան ընկերո-Ռեան անդամներէն գաղղէացի Պ. Փէլօ-ս պարոնը կը ծանո-ցանէ Մայրաքաղաքս հասարակո-Ռեանը որ այն զանազան հաստ-ագիր-ք ծաղիկները որ Հնդկաստանի երիրներէն քանի քանի անգամ Լրոպա բերին ո- չի կրցեր հաստ-ցեր են նէ, ինքը անյամբ երթալով այն կողմերը ո- պէսակ պէսակ ծաղիկներ- պերմեր բերէ. ընդ Ռնեայիր՝ հոն բնա- չի բանո-ած երկիրի մէջ հաստ-նելո-ն հնարը գտեր է է-ր արհեսպին վրայով ո-նեցած ընդարձակագոյն հմտո-ութիւնը։ Հիմա վերոյիշեալ Պ. Փէլօ-ը քանի մը շաբաթէ՝ի վեր հոս է և ծանօթելու համար հեռը բերած է այն կերպ կերպ չի պեսնո-ած ծաղիկներո-ն պերմերէն, այսինքն քանէ մանէօլաթ, ղաբաթ, բէրիթօսբերո-մ և վեց հարիւ-ր պէսակի չափ խոսթմերլի վարդերո- և այլ-ոլորեսակ պէսակ լալէներո-, վէ-մպի-ներո- վերէներո- պերմեր։ Այս ծաղիկներո-ն ամենը հոգաւ-էք՝ և պարբեր պարբեր գոյներով։ Այսոնց հեռ զանազան պղպաս- ծառերո- պո-ներ ալ կան որ ասոնց ալ բնա- այս կողմերը պեսնո-ած չեն։

Ովկ'ո-ղն ծանո- առնել այս գեղեցկապեսիլ ծաղիկներո- պերմերէն և պղպաս- ծառերո- պո-ներէն կամ անոնց պըպո-ղներո-ն կո-պերէն Ռոդ երիայ Պէյօղլը- Խո-ղն խաֆո-էն Ռեֆէրէն վարի կողմը լեմօկ-ափ Պ. Բայօլէն դիմայը գըրնայ յիշեալ Պ. Փէլօ-ը։

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՔ ԼՐԱԳՐՈՒՍ
Յովհ. Պ. Տէր Կիրակոս Չամուրեան։
Մինասիս Աղաթոն։
Ի Պոլսի նոր խան.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ